

1.2.7.3. Կազմակերպությունների հաշվարկների վիճակը

Ըստ նախնական տվյալների, 2000թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետության մոտ 1300 խոշոր և միջին առևտրային կազմակերպությունների ընդամենը պարտավորությունները (կրեդիտորական պարտքեր, բանկերի վարկեր և ստացած փոխառություններ) կազմել են 672606,5 մլն. դրամ: Մեկ տարում այդ ցուցանիշի աճը կազմել է 94090,6 մլն. դրամ կամ 16,3%:

Ընդամենը պարտավորությունների ծավալում 79,8%-ը (536708,5 մլն. դրամ) բաժին է ընկել կրեդիտորական պարտքերին:

Կազմակերպությունների կրեդիտորական պարտքերի կառուցվածքը 2000թ. հունվարի 1-ի դրությամբ

	Տարեսկզբի մնացորդը	Հաշվետու ժամանակաշրջանի վերջի մնացորդը	մլն. դրամ Ավելացում (+), նվազում (-)
Կրեդիտորական պարտքեր, ընդամենը	467928.6	536708.5	+68779.9
այդ թվում՝			
երկարաժամկետ	9882.6	18077.7	+8195.1
%-ով ընդամենի նկատմամբ	2.1	3.4	x
կարճաժամկետ	458046.0	518630.8	+60584.8
%-ով ընդամենի նկատմամբ	97.9	96.6	x
այդ թվում ժամկետանց	41765.5	41899.8	+134.3
%-ով ընդամենը կարճաժամկետ կրեդիտորական պարտքերի նկատմամբ	9.1	8.1	x
Ընդամենը կրեդիտորական պարտքերից հաշվարկներ մատակարարների և կապալառուների հետ	263405.6	294806.0	+31400.4
%-ով ընդամենը կրեդիտորական պարտքերի նկատմամբ	56.3	54.9	x
Հաշվարկներ ստացված կանխավճարների գծով	44781.0	27287.9	-17493.1
%-ով ընդամենը կրեդիտորական պարտքերի նկատմամբ	9.6	5.1	x

Տարեսկզբի նկատմամբ ընդամենը կրեդիտորական պարտքերն աճել են 68779,9 մլն. դրամով կամ 14,7%-ով: Ընդ որում, 2000թ. հունվարի 1-ի դրությամբ կրեդիտորական պարտքերի ընդհանուր ծավալում կարճաժամկետ պարտքերի տեսակարար կշիռը կազմել է 96,6% (518630,8 մլն. դրամ): Տարեսկզբի նկատմամբ կարճաժամկետ կրեդիտորական պարտքերն աճել են 60584,8 մլն. դրամով կամ 13,2%-ով: Կարճաժամկետ կրեդիտորական պարտքերից 41899,8 մլն. դրամը կամ 8,1%-ը կազմել են ժամկետանց պարտքերը, որոնք տարեսկզբի նկատմամբ աճել են 134,3 մլն. դրամով կամ 0,3%-ով:

2000թ. հունվարի 1-ի դրությամբ ընդամենը կրեդիտորական պարտքերի 54,9%-ը բաժին է ընկել մատակարարների և կապալառուների հետ հաշվարկներին: Տարեսկզբի նկատմամբ նշված պարտքերն աճել են 31400,4 մլն. դրամով կամ 11,9%-ով, իսկ ստացված կանխավճարների գծով հաշվարկները նվազել են 17493,1 մլն. դրամով կամ 39,1%-ով:

Հայաստանի կազմակերպությունների միջև կրեդիտորական պարտքերը կազմել են 485533,0 մլն. դրամ կամ ընդամենի 90,5%-ը, ԱՊՀ երկրներին՝ համապատասխանաբար 33868,6 մլն. դրամ կամ 6,3%: ԱՊՀ երկրների կազմակերպությունների պարտքերի 83,2%-ը բաժին է ընկնում Ռուսաստանի Դաշնությանը, 11,1%-ը՝ Թուրքմենստանին:

2000թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետության մոտ 1300 խոշոր և միջին առևտրային կազմակերպությունների ընդամենը դեբիտորական պարտքերը կազմել են 522034,5

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

մլն. դրամ և տարեսկզբի նկատմամբ աճել՝ 143196,4 մլն. դրամով կամ 37,8%-ով: Ընդ որում,, երկարաժամկետ դեբիտորական պարտքերն աճել են 1462,9 մլն. դրամով կամ 15,5%-ով, իսկ կարճաժամկետ պարտքերը՝ 141733,5 մլն. դրամով կամ 38,4%-ով: Կարճաժամկետ դեբիտորական պարտքերի 5,2%-ը (26570,5 մլն. դրամ) կազմել են ժամկետանց պարտքերը, որոնք տարեսկզբի նկատմամբ նվազել են 866,0 մլն. դրամով կամ 3,2%-ով:

Ընդամենը դեբիտորական պարտքերի 69,8%-ը կամ 364633,2 մլն. դրամը կազմել են գնորդների և պատվիրատուների հետ հաշվարկները: Նշված պարտքերը տարեսկզբի նկատմամբ ավելացել են 95915,6 մլն. դրամով կամ 35,7%-ով: Միաժամանակ ավելացել են տրված կանխավճարների գծով հաշվարկները՝ համապատասխանաբար 4168,5 մլն. դրամով և 31,8%-ով:

**Կազմակերպությունների դեբիտորական պարտքերի կառուցվածքը
2000թ. հունվարի 1-ի դրությամբ**

	Տարեսկզբի մնացորդը	Հաշվետու ժամանակաշրջանի վերջի մնացորդը	մլն. դրամ Ավելացում (+), նվազում (-)
Դեբիտորական պարտքեր, ընդամենը	378838.1	522034.5	+143196.4
այդ թվում՝			
երկարաժամկետ	9448.3	10911.2	+1462.9
%-ով ընդամենի նկատմամբ	2.5	2.1	x
կարճաժամկետ	369389.8	511123.3	+141733.5
%-ով ընդամենի նկատմամբ	97.5	97.9	x
այդ թվում՝ ժամկետանց	27436.5	26570.5	-866.0
%-ով ընդամենը կարճաժամկետ դեբիտորական պարտքերի նկատմամբ	7.4	5.2	x
Ընդամենը դեբիտորական պարտքերից հաշվարկներ մատակարարների և կապալառուների հետ	268717.6	364633.2	+95915.6
%-ով ընդամենը դեբիտորական պարտքերի նկատմամբ	70.9	69.8	x
Հաշվարկներ ստացված կանխավճարների գծով	13089.4	17257.9	+4168.5
%-ով ընդամենը դեբիտորական պարտքերի նկատմամբ	3.5	3.3	x

Հայաստանի կազմակերպությունների միջև դեբիտորական պարտքերը կազմել են 491294,3 մլն. դրամ, կամ ընդամենի 94,1%-ը, ԱՊՀ երկրներինը՝ համապատասխանաբար 12848,4 մլն. դրամ և 2,5%: ԱՊՀ երկրների կազմակերպությունների դեբիտորական պարտքերի 60,8%-ը բաժին է ընկնում Ռուսաստանի Դաշնությանը, 27,3%-ը՝ Վրաստանին, 4,3%-ը՝ Ուկրաինային, 2,8%-ը՝ Թուրքմենստանին, 2,6%-ը Բելոռուսիային:

2000թ. հունվարի 1-ի դրությամբ դուրս գրված անհուսալի դեբիտորական պարտքերը կազմել են 10819,0 մլն. դրամ, կամ ընդամենը դեբիտորական պարտքերի 2,1%-ը, իսկ դուրս գրված անհուսալի կրեդիտորական պարտքերը համապատասխանաբար՝ 12914,2 մլն. դրամ և 2,4%:

2000թ. հունվարի 1-ի դրությամբ կրեդիտորական պարտքերը գերազանցել են դեբիտորականին 14674,0 մլն. դրամով կամ 2,8%-ով: